Արվեստ՝ ծնված երկաթից ու կրակից

Հիմնականում այդ երկու բաղադրիչների արդյունք է Հայաստանի վաստակավոր նկարիչ Արա Ալեքյանի ստեղծագործությունը, որին ծանոթ են բոլորը կամ գրեթե բոլորը: Ով երբևէ եղել է Երևանում և անցել Ազնավուրի հրապարակով, չի կարող նկատած չլինել Արայի կերտած երկաթակուռ ձիերն ու ցուլերը, արջերն ու մեծաչափ սարդը: Դրանց մոտ ամեն օր հարյուրավոր մարդիկ են լուսանկարվում՝ այդ կերպ արտահայտելով իրենց դրվատական վերաբերմունքն արվեստի այդ ստեղծագործություններին:

Հիացմունքից առաջ դրանք նախ զարմանք են հարուցում դիտողի մոտ. ինչպե՞ս է հնարավոր տարատեսակ գամերից ու պտուտակներից, ավտոմեքենայի փոխանցման տուփերից ու ատամնանիվներից ստանալ նման գեղարվեստական արդյունք: Դրա համար առնվազն համարձակ երևակայություն է պետք՝ անասելի տքնանքի ու անվերջ որոնումների հետ գիրկընդխառն, ինչպես նաև ստացված արդյունքն ամեն անգամ գերազանցելու համառ հետևողականություն: Իսկ այդ ամենի հետ միասին ու թերևս դրանցից առաջ՝ նաև բարձրակարգ վարպետություն և լրջմիտ վերաբերմունք ստանձնած գործին:

Այդ հատկանիշները Արա Ալեքյանի մոտ ձևավորվեցին Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում, ապա Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի քանդակի բաժնում սովորելու տարիներին: Արվեստանոցի ղեկավարը նշանավոր քանդակագործ Արա Հարությունյանն էր, որն իր սանի մոտ նկատել էր կոմպոզիցիա կառուցելու անսովոր ունակություն: «Երբ ուսանող ժամանակ կոմպոզիցիաներ էի անում, այնքան նուրբ ու բարալիկ էին ստացվում, որ անհնար էր դրանք վերածել բրոնզի»,– հիշում է Արան: Հենց ղեկավարի խորհրդով էլ սկսել է զոդել սովորել, տիրապետել կրակի

լեզվին: Այդպես էր միայն հնարավոր «բարալիկ» կոմպոզիցիաներին ամրություն հաղորդել:

Երկաթը որպես քանդակագործության նյութ կիրառել են թե՛ Պիկասոն, թե՛ Դալին, թե՛ օտար ու հայազգի շատ այլ արվեստագետներ: Նրանց ստեղծագործությունները, սակայն, հիմնականում վերացապաշտ ուղղությանն են հարում: Մինչդեռ Արա Ալեքյանը նախապատվությունը տալիս է ֆիգուրատիվ կոմպոզիցիաներին և կերպարային լուծումներին: Նրա «հերոսները» հիմնականում կենդանիներ ու տարատեսակ միջատներ են: «Ինձ գրավում է կենդանիների պլաստիկան,– պատմում է Արան ու շարունակում,– նրանք ևս Աստծո ստեղծած էակներն են»: Իհարկե, ամենից շատ քանդակագործը ձիեր է կերտում և արդեն մեծ ու փոքր ձիերի մի ողջ «երամակ» ունի:
Դրանցից երկուսն այսօր զարդարում են Բրյուսելի պուրակները՝ դասվելով Բելգիայի մայրաքաղաքի 200 լավագույն քանդակների շարքին:

Քանդակների «հումքը» Արան հավաքում է ամենատարբեր վայրերից՝ մեքենաների արհեստանոցներից, ավտոտնակներից, ճամփեզրերից, նույնիսկ աղբանոցներից: «Ես երկաթի սանիտար եմ»,– սիրում է կրկնել նա: Ձեռք բերելը, սակայն, գործի սկիզբն է միայն: Հետո հարկ է լինում կուտակած մետաղն առանձին դասդասել, խմբավորել և «մտովի» հավաքելուց հետո նոր միայն անցնել գործի:

Մեծաչափ գործի պատրաստումը 4-4,5 ամիս է տևում: Ամենատարբեր ձևեր է փորձում՝ վերջում ընտրելով լավագույնը: Հետաքրքիրն այն է, որ յուրաքանչյուր քանդակ նաև քանդվում է՝ նոր տեղում այն հավաքելու պայմանով:

Արայի ստեղծագործություններում օգտագործված, ասենք, մեքենայի խաչուկն ընկալվում է հենց որպես քանդակի օրգանական ու անտրոհելի մաս: Եվ կարծես մոռացվում է, որ այն սկզբնապես այլ նշանակություն է ունեցել: Սա՛ է վարպետությունը, երբ նույնիսկ երկաթի նյութականությունն է ետին պլան մղվում՝ սովորական մետաղյա ձին, օրինակ, վերածելով հրեղեն նժույգի: Խորհրդանշական է նաև քանդակների բացման ու ներկայացման կերպը: Հեղինակի մտահղացմամբ

դրանք պատվում են թղթով, ապա այրվում: Ու կրակի միջից դուրս է գալիս արվեստի ստեղծագործությունը:

Արա Ալեքյանը հաջող փորձեր ունի նաև մարդու պատկերման ասպարեզում: Առանձնացնենք «Փարաջանով» քանդակաշարը, որտեղ հեղինակը ձգտել է երկաթի տարբեր համակցումների միջոցով ստեղծել մեծ արվեստագետի արտիստիկ կերպարը: Պարզվում է՝ 1983-ից նա ճանաչել է վարպետին, եղել թիֆլիսյան նրա տանը և նույնիսկ անձնական նվեր ստացել նրանից: «Դեռ այն ժամանակ ես զգացի Փարաջանովի արվեստի ներքին հզոր ուժը»,– ասում է Արան:

Նշանավոր կինոռեժիսորի կերպարը մեկնաբանելու ցանկությունը մշտապես հետապնդել է նրան՝ չլքելով և ոչ մի պահ: Ասվածի վկայությունը «Փարաջանով» (2005) կլոր դիմաքանդակն է՝ դրված եռոտանի պատվանդանի վրա: Կոմպոզիցիայով այն կինոխցիկ է հիշեցնում՝ հավաքված մանր խողովակներից, հեծանվի աստղանվից ու զանազան պտուտակներից: Դեմքի մակերևույթը լուծված է գիպսի վրա գամեր ու զսպանակներ փակցնելու ճանապարհով: Իսկ ետևի մասում մեքենայի փոխանցման սկավառակներ են, որոնք ֆիլմադարան են հիշեցնում:

Բառացիորեն վերջերս ստեղծվեց «Պարող Փարաջանով»՝ դինամիկայով հագեցած կոմպոզիցիան, որտեղ կինոկախարդը պատկերված է իր իսկ ստեղծած կերպարներից մեկի տարազով:

Ալեքյանի արվեստանոցը գտնվում է նրա ծննդավայր Վեդի քաղաքում: Այդտեղ նրան ընդարձակ մի տարածք է տրամադրվել, որտեղ էլ ծնվում են նրա մեծ ու փոքր աշխատանքները: «Երբեմն դետալներն իրենք են ուղղություն տալիս՝ ինչ անեմ»,– բացատրում է քանդակագործը: Ընդ որում, որքան էլ ծանոթ լինենք նրա մեծաչափ աշխատանքներին, հաճախ տեղյակ չենք փոքր գործերից («Խոյ», «Դոն Կիխոտ», «Պարուհի», «Աքաղաղը», «Խաչվածը»՝ ստեղծված փայտի ու մետաղի համադրությամբ):

Արան ինքն էլ չի հիշում իր երկաթյա քանդակների ստույգ թիվը: Բոլոր դեպքերում դրանք վաղուց են հատել հինգ տասնյակի սահմանագիծը: Մի մասը գտնվում է արտասահմանում, մյուսները՝ տարբեր պատկերասրահներում ու մասնավոր հավաքածուներում: Առաջինն ինքն է զգում զարգացման դինամիկան իր գործերում, երբ ինքնավերլուծում է դրանք՝ փորձելով տանել զուգահեռներ ու գտնել տարբերություններ:

Արա Ալեքյանի ստեղծագործությունները հաճախ են հիմք տալիս գեղարվեստական նոր երկեր ծնելու: Այսպես՝ Սուրեն Տեր-Գրիգորյանի հեղինակած «Կրակից ծնվածը» տեսաֆիլմը (2005) նվիրված է նրա ձիարձաններից մեկի ստեղծման պատմությանը: «Ոսկե ծիրան» կինոփառատոնում այն հատուկ մրցանակ շահեց, իսկ Ֆրանսիայի Քոբուրգ քաղաքում արժանացավ «Էպոնա-2005» ֆիլմերի միջազգային կինոփառատոնի Գլխավոր մրցանակին: Վերջերս էլ երիտասարդների մի խումբ «Սարդ» ստեղծագործության հիման վրա 3D անիմացիայով գովազդային մի հոլովակ էր նկարահանել, որը տեղադրվեց Youtube-ում՝ օրական ունենալով 50 հազարից ավելի այցելու:

Վերջին տարիներին քանդակագործը մասնակցում է Մոնակոյում կազմակերպված ամենամյա էքսպո ցուցահանդեսներին: Հետքրքիր էր տեղեկանալ, թե ինչպես է Մարսելի քաղաքապետը գնել Փարաջանովի ֆիգուրատիվ քանդակը՝ այն տեղադրելով Անրի Վերնոյի «Մայրիկ» ֆիլմից հայտնի և իր մորը պատկանող տան բակում:

Ակամա ցանկություն է առաջանում Արա Ալեքյանի գործերը տեսնելու նաև Երևանի «Գաֆեսճյան» կենտրոնի քանդակների պուրակում: Չէ՞ որ դրանք մեր մայրաքաղաքի հյուրերին կգրավեն իրենց թե՛ ներգործության ուժով, թե՛ կատարման վարպետությամբ:

Լևոն Լաճիկյան